# Ընտրական ինստիտուտի արդյունավետության խնդիրները հետխորհրդային Հայաստանում

ԷՄԻԼ ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ
ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների, ժողովրդավարության
և եվրոպագիտության ամբիոն, ԵՊԼՀ

Հանձնված է
Ընդունված է

*Հետխորհրդային երկրներում ժողովրդավարացման գործընթացը գծային ընթացք չունի և ծնում է տարբեր կոնֆլիկտներ: Ընտրական ինստիտուտը, որպես ընտրական քաղաքական մշակույթի անհրաժեշտ տարր, կարևոր դերակատարություն ունի պետության քաղաքական կայացման գործընթացում: Հոդվածում քաղաքական մասնակցության և քաղաքական խոսույթի ենթատեքստում ուսումնասիրվել է Հայաստանում 1991-2013թթ. տեղի ունեցած ընտրական գործընթացները և բացահայտվել են Հայաստանում ընտրական ինստիտուտի զարգացման դինամիկան, բնութագրիչ կողմերը, ինչպես նաև կայացման խոչընդոտները: Այդ ինստիտուտը կայուն չէ և ունի կոնֆլիկտային բնույթ, քաղաքական ուժերը հիմնականում անձնավորված են և չունեն գաղափարական տարբերություններ: Ընտրական ինստիտուտի գործունեության բարելավման և դրա նկատմամբ հասարակական վստահության վերականգնման համար անհրաժեշտ է ոչ այնքան օրենսդրության բարելավում, որքան քաղաքական ուժերի կայացում և հասարակական գիտակցության մեջ համապատասխան արժեքների արմատավորում:*

**Բանալի բառեր**
Ընտրական ինստիտուտ, բազմակուսակցական համակարգ, հետխորհրդային տրանսֆորմացիա, Հայաստան

Խորհրդային Միության փլուզումը, առաջացնելով աննախադեպ հասարակական-քաղաքական իրավիճակ հետխորհրդային տարածքում, հանրապետություններում, պարտադրեց հասարակական կյանքի բոլոր ոլորտներն ընդգրկող համակարգային փոխակերպումներ[1]: Ստեղծված իրավիճակը պահանջում էր հասարակական-քաղաքական հարաբերությունների կարգավորման արդիական մեխանիզմների որոնում և մշակում, քանի որ նախկին խորհրդային մեխանիզմների և մոտեցումների գործադրումն արդեն կիրառելի չէր: Հասարակական կարգի փոփոխությունը, քաղաքական վարչակարգի փոխակերպումը պահանջում էին նոր ձև ու բովանդակություն ունեցող քաղաքական ինստիտուտների և նոր քաղաքական մշակույթի ձևավորում, որն, ըստ 90-ականների սկզբին տիրապետող մասնագիտական կարծիքի[2], պետք է հիմնվեր ժողովրդավարական-ազատական գաղափարների վրա:

---

[1] **Թորոսյան Տ.** Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա, «Գիտություն» հրատ., Երևան, 2006, 421 էջ; Погосян Г. Армянское общество в трансформации/ изд. "Лусабац", Ереван, 2003, 460 стр.

[2] **Huntington S.** The Third Wave: Democratization in the Late Twentyeth Century. Norman and London, University of Oklahoma Press, 1991, 366p.

Ժողովրդավարության արևմտյան փորձն ու քաղաքական ինստիտուտները դիտարկվում էին որպես մոդելներ նորանկախ հանրապետությունների քաղաքական արդիականացման համար: Արևմուտքն էլ, իր հերթին, շահագրգիռ էր ներդնել իր հասարակական և քաղաքական արժեհամակարգը նորաստեղծ պետություններում, քանի որ փլուզվել էր երկբևեռ աշխարհակարգը և հետխորհրդային տարածքում հնարավորություն էր ստեղծվել ազդեցության և վերահսկողության գոտիների վերանայման համար: Արևմտյան հասարակական և քաղաքական կյանքին հատուկ քաղաքական բազմակարծությունը, ընտրական մրցակցային ինստիտուտը և այլ ժողովրդավարական մեխանիզմներ, ինստիտուտներ և արժեքներ, որոնք գոյություն չունեին խորհրդային տարիներին, սկսեցին աստիճանաբար ներդրվել նորանկախ պետություններում: Խորհրդային միակուսակցական քաղաքական համակարգը, որը մերժում էր քաղաքական բազմակարծությունն ու մրցակցությունը, ինքնին ի չիք էր դարձնում իրական ընտրական մրցակցային ինստիտուտի գոյության հնարավորությունը: Խորհրդային կենտրոնացված քաղաքական իշխանությունը հասարակության քաղաքականապես ակտիվ հատվածին բոլոր թույլատրելի և անթույլատրելի միջոցներով հեռացնում էր իրական քաղաքականության ոլորտից, սակայն խորհրդային վերջին տարիներին՝ վերակառուցման շրջանում, արդեն նկատվում էին քաղաքական բազմակարծության ճանաչման, շուկայական տնտեսության ձևավորման, կառավարման ապագաղափարականացման միտումներ[3]: Եվ պատահական չէ, որ խորքային պատկերացումներ չունենալով ժողովրդավարական արժեքների, մեխանիզմների ու ինստիտուտների մասին, հետխորհրդային տարածքի ժողովուրդները խանդավառությամբ էին վերաբերվում հասարակական կյանքի կտրուկ փոփոխություններին: Նրանք ցանկանում էին տեսնել նորանկախ երկիրը որպես ազատական, քանի որ ժողովրդավարական վարչակարգի պայմաններում է հնարավոր ապահովել հասարակության լայն հատվածների մասնակցությունը քաղաքական գործընթացներին, հատկապես՝ քաղաքական իշխանության ձևավորմանը, որտեղ կարևոր դերակատարություն ունի ընտրական ինստիտուտը: Էական նշանակություն ունեցավ այն հանգամանքը, որ արևմտյան ու կոնունիստական արժեհամակարգերի մրցակցությունում հաջողություն ունեցավ բարեկեցիկ կյանք և ազատություններ ապահովող արևմտյան համակարգը և փլուզվեց ԽՍՀՄ-ը:

Քաղաքական մրցակցությունը և բազմակարծությունը գործնականում դրսևորվում են այլընտրանքային ընտրական ինստիտուտի միջոցով, որը, լինելով ժողովրդավարության արտացոլման կարևոր գործիք, կարևոր նշանակություն ունի ներպետական քաղաքական կառույցների ու գործընթացների արդյունավետության գնահատման, թերությունների բացահատման, հետևաբար և դրանց հավասարակշռման, կայունացման և բարելավման գործում: Ընտրական ինստիտուտի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բացահայտելու և վերլուծելու ընտրական գործընթացների խնդիրներն ու առանձնահատկությունները, ինչպես նաև քաղաքական մասնակցության և քաղաքական վարքագծի ազդեցությունն այդ գործընթացների վրա: Ավելին, քանի որ այն եզակի գործընթաց է, որին միաժամանակ ամբողջությամբ մասնակցում են քաղաքական և պետական կառավարման

[3] **Крыштановская О.** Трансформация старой номенклатуры в новую российскую элиту. *Общественные науки и современность*. 1995, № 1, сс. 63-73.

համակարգերը, ընտրական գործընթացների ընթացքն ու արդյունքները հնարավորություն են տալիս ձևավորելու այդ համակարգերի ինտեգրալ գնահատականը: Պատահական չէ, որ 90-ականներին համարվում էր, որ հետխորհրդային տրանսֆորմացիայի միասնական հարացույցում առանցքային նշանակություն ունեն ընտրությունները[4]: Իհարկե, թե միասնական հարացույցի, թե ժողովրդավարացման գործընթացի համար ընտրությունների առանցքային նշանակության գաղափարները հետագայում վերանայվեցին[5], սակայն ընտրությունները շարունակում են մնալ ժողովրդավարության մակարդակը բնութագրող կարևոր գործոն:

Ընտրական ինստիտուտի համար բնութագրիչ մի շարք տարրերի հետազոտությունը կարող է թույլ տալ ընդհանուր պատկերացում ձևավորել կոնկրետ քաղաքական ինստիտուտի մասին, բացահայտել դրանում առկա խնդիրները և դրանց պատճառները: Այս հոդվածում այդ նպատակով դիտարկվում են ընտրական գործընթացներին քաղաքացիների և քաղաքական ուժերի մասնակցության բացարձակ և հարաբերական դինամիկան, ընտրությունների արդյունքների կապը թեկնածուների և իշանությունների միջև առնչությունների հետ, ընտրությունների ժամանակ քաղաքական խոսույթի ազդեցությունը հետընտրական զարգացումների վրա և այդ խոսույթի առանձնահատկությունները տարբեր տեսակի ընտրական գործընթացների ժամանակ:

## Ընտրողների ակտիվությունն ըստ ընտրական գործընթացի տեսակի

Հետխորհրդային երկրներում բազմակուսակցական համակարգերի ներդրումը և սահմանադրությունների ու ընտրական օրենսդրությունների ընդունումն ստեղծեցին բոլոր անհրաժեշտ կառուցվածքային հիմքերն ու կանոններն այդ երկրներում ընտրական ինստիտուտների ձևավորման համար: Սակայն այդ ինստիտուտը ոչ թե պետական կառավարման համակարգի ձևավորման պարզունակ մեխանիզմ է, այլ ժողովրդավարական քաղաքական մշակույթի արդյունք, որի արդյունավետությունը մեծապես կախված է ընտրական գործընթացի երկու գլխավոր դերակատարների՝ ընտրողների (հասարակություն) և ընտրվողների (քաղաքական ուժեր) ձգտումների ու պատկերացումների համապատասխանությունից ժողովրդավարական միջավայրի համար բնորոշ արժեհամակարգին: Որպես դրա անուղղակի ցուցիչ հոդվածում օգտագործվում է քաղաքական խոսույթը ընտրական գործընթացների շրջանում: Հայաստանում ընտրական ինստիտուտի արդյունավետության հետազոտության նպատակով օգտագործվել են 1991-2013 թթ. տեղի ունեցած 16 համապետական ընտրական գործընթացների (ՀՀ Նախագահի ընտրություններ, ԱԺ ընտրություններ, Սահմանադրության հանրաքվեներ) ժամանակ արձանագրված քաղաքական մասնակցության տվյալները[6], ինչպես նաև քաղաքական խոսույթի դրսևորումներն այդ գործընթացների ժամանակ[7]:

---

[4] **Carothers T.** The End of the Transition Paradigm. *Journal of Democracy*, 2002, 13, 1, pp. 6-21.

[5] **Թորոսյան Տ., Սուքիասյան Հ.** Հետխորհրդային տրանսֆորմացիայի երեք փուլերը, երեք խմբերը և երեք հարացույցները: *Հայկական քաղաքագիտական հանդես*, 2013, No 1, էջ - :

[6] ՀՀ Ազգային արխիվ՝ 1. ՀՀ Գերագույն Խորհրդի Պատգամավորների ընտրությունների կենտրոնական ընտրական հանձնաժողով, 1991թ. հոկտեմբերի 16-ի ՀՀ նախագահի ընտրության արձանագրություններ, ֆոնդ 1183, ցուցակ 1, գործ 52, 2. Վերլուծական տեղեկանք, ՀՀ ԱԺ ընտրությունների և ՀՀ Սահմանադրության հանրաքվեի արդյունքների ամփոփման մասին, ֆոնդ 1183, ցուցակ 1, գործ 31, 3. ՀՀ նախագահի ընտրությունների

Աղյուսակ 1-ն արտացոլում է համապետական քվերակություններին քաղաքացիների մասնակցության պատկերը:

**Աղյուսակ 1.**

| Տարեթիվ | ՀՀ ընտրողների ընդհանուր թիվն ըստ ընտրողների ցուցակի | Քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը | Մասնակցության տոկոսը |
|---|---|---|---|
| 1991 թ. Ն Ը | 2. 155. 698 | 1. 518. 090 | 70.4% |
| 1995 թ. Ս Հ | 2. 189. 804 | 1. 217. 531 | 55.6% |
| 1995 թ. ԱԺ Ը | 2. 461. 700 | 1. 283. 573 | 52.1% |
| 1996 թ. Ն.Ը | 2. 201. 999 | 1. 331. 029 | 60.4% |
| 1998 թ. Ն.Ը 1-ին փուլ | 2. 300. 816 | 1. 449. 004 | 62.9% |
| 1998 թ. Ն.Ը 2-րդ փուլ | 2. 300. 816 | 1. 567. 702 | 68.1% |
| 1999 թ. ԱԺ Ը | 2. 198. 544 | 1. 137. 660 | 51.7% |
| 2003 թ. Ն Ը 1-ին փուլ | 2. 315. 410 | 1. 462. 383 | 63.1% |
| 2003 թ. Ն.Ը 2-րդ փուլ | 2. 331. 507 | 1. 595. 702 | 68.4% |
| 2003 թ ԱԺ Ը | 2. 340. 744 | 1. 233. 757 | 52.7% |
| 2003 թ. ՍՀ | 2. 339. 704 | 1. 215. 908 | 51.9% |
| 2005 թ. ՍՀ | 2. 317. 462 | 1. 514. 545 | 65.3% |
| 2007 թ. ԱԺ.Ը | 2. 319. 722 | 1. 391. 540 | 59.9% |
| 2008 թ. Ն.Ը | 2. 311. 917 | 1. 671. 027 | 72.2% |
| 2012 թ. ԱԺ Ը | 2. 522. 906 | 1. 572. 858 | 62.3% |
| 2013 թ. Ն Ը | 2. 528. 050 | 1. 521. 489 | 60.2% |

1991-2013 թթ. ՀՀ-ում տեղի ունեցած համընդհանուր քվեարկություններին քաղաքացիների մասնակցության դիմանիկան բերված է նկար 1–ում:

---

ընտրական հանձնաժողովների արձանագրություններ, ֆոնդ 1183, ցուցակ 3, գործ 97, 4. 1998թ. ՀՀ նախագահի արտահերթ ընտրությունների քվեարկության վերջնական արդյունքների մասին ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի ամփոփիչ արձանագրություններ, ֆոնդ 1183, ցուցակ 3, գործ 143, 5. 1999թ. մայիսի 30-ի ՀՀ ԱԺ ընտրությունների արդյունքներ, http://elections.am/Default.aspx, 6. 2003թ. փետրվարի 19-ի ՀՀ Նախագահի ընտրությունների 1-ին փուլի արդյունքներ, http://elections.am/Default.aspx, 7. 2003թ. մարտի 5-ի ՀՀ Նախագահի ընտրությունների 2-րդ փուլի արդյունքներ, http://elections.am/Default.aspx, 8. 2003թ. մայիսի 25-ի ՀՀ ԱԺ ընտրությունների արդյունքներ, http://elections.am/Default.aspx, 9. 2003թ. մայիսի 25-ի (ՀՀ Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու մասին նախագծի) հանրաքվեի արդյունքներ, http://elections.am/Default.aspx, 10. 2005թ. նոյեմբերի 27-ի (ՀՀ Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու մասին նախագծի) հանրաքվեի արդյունքներ, http://elections.am/Default.aspx, 11. 2007թ. մայիսի 12-ի ՀՀ ԱԺ ընտրությունների արդյունքներ, http://elections.am/Default.aspx, 12. 2008թ. փետրվարի 19-ի ՀՀ Նախագահի ընտրություններ, http://elections.am/Default.aspx, 13. 2012 թ. մայիսի 6-ի ՀՀ ԱԺ ընտրությունների արդյունքներ, http://www.elections.am/proportional/., 2013թ. փետրվարի 18-ի ՀՀ Նախագահի ընտրություններ, http://www.elections.am/presidential/:

7

Նկար 1




Ընտրողների մասնակցության բացարձակ և հարաբերական ցուցանիշների համեմատության ժամանակ նկատելի է մի քանի ուշագրավ առանձնահատկություն: Նախ, 2013թ. նախագահական և 2012թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ ընտրողների թիվն ընտրացուցակներում աճել է մոտ 200000-ով: Դա կարող էր լուրջ վերապահումներ առաջ բերել տվյալների հավաստիության հետ կապված, սակայն, քանի որ մասնակցության բացարձակ ցուցանիշները համադրելի են նախորդ ընտրությունների ցուցանիշների հետ, ապա վերապահումները պետք է արվեն 2012 թ. խորհրդարանական և 2013թ. նախագահական ընտրությունների մասնակցության հարաբերական ցուցանիշների վերաբերյալ: Արդյունքում, կարելի է արձանագրել հետևյալ օրինաչափությունը. Ընտրողների ակտիվությունն ամենամեծն է նախագահական ընտրությունների ժամանակ (70 տոկոսի շրջակայքում), ապա՝ սահմանադրական հանրաքվեներին ամենացածրը՝ խորհրդարանական ընտրությունների ժամանակ (50 տոկոսից մի փոքր ավել մինչ 2003թ., ապա շարունակաբար աճում է): Ընդ որում, օրինաչափությունը նույնն է մասնակցության թե բացարձակ, և թե հարաբերական ցուցանիշների համար: Մասնավորապես, երկու դեպքում էլ ընտրազանգվածի մասնակցության ամենաբարձր և ամենացածր ցուցանիշներն արձանագրվել են նույն ընտրությունների ժամանակ (ամենաբարձրը՝ 2008 թ. ՀՀ Նախագահի ընտրություններ – 72.20% կամ 1. 671. 027 ընտրող, ամենացածրը՝ 1999 թ. ՀՀ ԱԺ ընտրություններ – 51.70% կամ 1. 137. 660 ընտրող):

Հարաբերական մասնակցության միջին ցուցանիշներն ըստ ընտրական գործընթացների բերված են Նկար 2-ում:

Նկար 2




Ընտրողների ակտիվության հստակ օրինաչափությունն ըստ ընտրական գործընթացների տեսակների (նախագահական, սահմանադրական և խորհրդարանական) կարող է բացատրվել մի քանի պատճառներով: Առաջինը այն կարծրատիպի կենսունակությունն է, որը ձևավորվել էր պետական կառավարման մարմինների վերաբերյալ խրհրդային տասնամյակների ընթացքում: Խորհրդային տարիներին հասարակությունը որպես պետական կառավարման բարձրագույն մարմին ընկալում էր Խորհրդային միության կոմունիստական կուսակցության (Կոմկուս) կենտրոնական կոմիտեի բյուրոն, իսկ ավելի հաճախ՝ գլխավոր քարտուղարին: Պատահական չէ, որ պետական կառավարման վերաբերյալ անձնավորված պատկերացումները հաճախ ունենում էին խիստ ծայրահեղ դրսևորումներ. Համատարած ողբ Ստալինի մահվան կապակցությամբ, նամակներ՝ Լենինի դամբարանին անգամ 70-80-ական թվականներին, տարատեսակ խնդիրների լուծման ակնկալիքով և այլն: Մինչդեռ խորհրդարանի նկատմամբ վերաբերմունքը հաճախ անտարբեր էր, իսկ վերջին տասնամյակներին՝ քամահրական: Հարկ է նկատել, որ կառավարման հիմնական լծակներ ունեցող կուսակցական մարմիններն էլ նպաստում էին դրան՝ խորհրդարանի համալրման համար սահմանելով և կիրառելով ձևական չափանիշներ ու չափաբաժիններ ըստ զբաղմունքի բնույթի: Բնական է, որ նման արժեքային կարծրատիպերի փոփոխությունը տևական ժամանակ է պահանջում անգամ այն ժամանակ, երբ ջանքեր են գործադրվում այդ ուղղությամբ: Մինչդեռ հետխորհրդային երկրներում ձևավորվող կուսակցությունների ճնշող մեծամասնությունը ստեղծվում էր հար և նման Կոմկուսին, քանի որ դա անում էին մարդիկ, ում գիտելիքներն ու փորձը սահմնափակվում էին խորհրդային տարիներով:

Նախագահական ընտրությունների ժամանակ ավելի մեծ ակտիվությունը պայմանավորված է ևս մեկ հանգամանքով: Քանի որ այդ ընտրություններն անձնավորված են, ապա ավելի բարձր է քաղաքական խոսույթի կոնֆլիկտայնության

ցուցանիշը: Որքան կոնֆլիկտային է քաղաքական խոսույթը, այնքան մեծ է քաղաքական ակտիվությունը ընտրություններին և հակառակը[8]:

Կարելի է արձանագրել, որ ՀՀ Նախագահի ընտրությունների ժամանակ, երբ դրանք անցկացվել են երկու փուլով, երկրորդ փուլում քաղաքացիների մասնակցության ցուցանիշները միշտ եղել են ավելի բարձր առաջին փուլի ցուցանիշներից: Սա վկայում է այն մասին, որ նախագահական ընտրությունների երկրորդ փուլում, երբ ընտրապայքարին մասնակցում են առաջադրված թեկնածուներից միայն երկուսը, հասարակությունն առավել ակտիվությամբ է մասնակցում քաղաքական կյանքին, քանի որ այդ պարագայում անհատն ավելի հեշտ է կողմնորոշվում՝ իր քվեն տալով երկու թեկնածուներից մեկի օգտին: Այս պարագայում քաղաքական խոսույթի ազդեցությունը հասարակական գիտակցության վրա ավելի է մեծանում, քանի որ երկրորդ փուլ անցած թեկնածուները հնարավորություն են ստանում իրենց ընտրական ելույթների, քննարկումների և բանավեճերի միջոցով ավելի մեծ ազդեցություն ունենալ ընտրական գործընթացի վրա: Հետևաբար՝ կարելի է պնդել, որ քաղաքական խոսույթը կարող է լուրջ ազդեցություն թողնել ընտրազանգվածի քաղաքական վարքագծի վրա՝ դրանով պայմանավորելով ընտրական գործընթացին նրա մասնակցությունը: Նախագահական ընտրությունների ժամանակ նկատելի է հասարակական-քաղաքական քննարկումների տիրույթի, տեղեկատվության տարածման ծավալների և հասարակության կողմից դրանց ուղղված արձագանքների ավելի լայն շրջանակ, քանի որ հասարակության գրեթե բոլոր շերտերը ցուցաբերում են ավելի բարձր քաղաքական ակտիվություն, շահագրգռվածություն՝ հենց այդ ընտրությունների հետ հիմնականում կապելով իրենց շահերի ներկայացման, իրացման, պահանջների բավարարման, սոցիալական խնդիրների լուծման հնարավորությունները: Հատկանշական է, որ այդ տեսակետից նախագահի ինստիտուտի ընկալումն էական փոփոխություններ չի կրել անգամ 2005թ. սահմանադրական փոփոխություններից հետո, որի արդյունքում էականորեն կրճատվեցին նախագահի լիազորությունները և ձևավորվեց լիարժեք հակակշիռների ու զսպումների սահմանադրական համակարգ: Վերոնշյալ բոլոր գործոնները նպաստում են լայնածավալ հասարակական-քաղաքական քննարկումների կազմակերպմանը, ինչն էլ իր հերթին քաղաքական խոսույթի միջոցով ազդում է ընտրազանգվածի գիտակցության և վարքագծի վրա:

Ընստ ընտրական գործընթացների տեսակների հստակ արտահատված առանձնահատկություններ ունի ոչ միայն մասնակցության գործոնն, այլև նախընտրական և հետընտրական զարգացումների բնույթը:

Բացառությամբ 1991 և 1998թ., մյուս բոլոր նախագահական ընտրություններն ուղեկցվել են քաղաքական անկայունությամբ, մեծ լարվածություն ունեցող կոնֆլիկտային քաղաքական խոսույթով, բողոքի զանգվածային ցույցերով, երբեմն՝ իրավապահների հետ բախումներով: Սակայն Ազգային ժողովի նախընտրական և հետընտրական գործընթացները, թերևս բացառությամբ 1995թ., հիմնականում ընթացել են մեղմ մթնոլորտում՝ չհանգեցնելով կտրուկ դիմակայության: Դա հիմք է տալիս ենթադրելու, որ ոչ միայն հետխորհրդային հասարակության ընկալման մեջ

---

[8] **Օրդուխանյան Է.,** Իշխանություն և ընդդիմություն. քաղաքական խոսույթի վերլուծություն, «Լիմուշ» հրատ., Երևան, 2010, էջ 127-128:

առանձնահատուկ տեղ ունեն նախագահական ընտրություններն, այլև քաղաքական ընդդիմության, քանի որ նախընտրական և հետընտրական զարգացումներում լարվածության հիմնական խթանողը բնականաբար ընդդիմադիր քաղաքական ուժերն են:

Մի շարք առանձնահատկություններով աչքի ընկավ 2013թ. նախագահական ընտրությունը: Թեկնածուներ առաջադրեցին ընդամենը մեկ տարի առաջ տեղի ունեցած Ազգային ժողովի ընտրության արդյունքում խորհրդարան անցած 6 կուսակցություններից միայն երկուսը՝ առավելագույն և նվազագույն ձայներ հավաքած ՀՀԿ-ն և <<Ժառանգությունը>>: Այդ փաստը, ինչպես նաև այն հանգամանքը, որ այդ խորհրդարանական ընտրություններին մասնակցած կուսակցությունների թիվը ավելի քան երկու անգամ զիջում էր նախորդ խորհրդարանական ընտրություններին մասնակցածների թվին, վկայում է, որ բազմակուսակցական համակարգում առկա է ճգնաժամը[9]: 2013թ. նախագահական ընտրությունն առանձնացավ ևս մեկ բացասական երևույթով: Նախընտրական շրջանում տեղի ունեցավ աննախադեպ իրադարձություն՝ թեկնածուներից մեկի դեմ իրականացվեց մահափորձ, որն, ըստ իրավապահ մարմինների, կազմակերպել էր մեկ այլ թեկնածու: Թեև այդպես էլ անհայտ մնաց մահափորձի դրդապատճառը, սակայն ակնհայտ էր, որ քաղաքական ենթատեքստի առկայության հավանականությունը խիստ ցածր է, քանի որ ի սկզբանե պարզ էր, որ երկու թեկնածուներն էլ դուրս են իրական մրցակցությունից, որը ծավալվեց երկու խորհրդարանական ուժերի առաջնորդների միջև: Ընտրության արդյունքները ևս ուշագրավ են՝ մեկ տարի առաջ տեղի ունեցած խորհրդարանական ընտրության արդյունքների ենթատեքստում: Եթե գործող նախագահի ստացած ձայները համեմատելի են խորհրդարանական ընտրություններում իր գլխավորած ՀՀԿ-ի ստացած ձայների հետ, ապա Ր. Հովհաննիսյանի երկրորդ արդյունքը մեծապես գերազանցում է իր գլխավորած <<Ժառանգության>> մեկ տարվա վաղեմության արդյունքը: Թեև հետընտրական շրջանն այս անգամ ևս ուղեկցվեց արդյունքները վիճարկող ցույցերով, երթերով և հանրահավաքներով, ինչպես նախորդ բոլոր նախագահական ընտրություններից հետո, սակայն զարգացումներն ունեցան մի շարք առանձնահատկություններ: Մասնավորապես, նկատելի էր քաղաքական խոսույթի էական տարբերություն նախորդ նախագահական ընտրությունների համեմատ: Արդյունքում հաստատվեց վերոհիշյալ օրինաչափությունը քաղաքական խոսույթի,ներքաղաքական լարվածության և դիմակայության դրսևորումների միջև: Առաջին անգամ հետընտրական զարգացումները, հագեցած լինելով բողոքի գործողություններով և հասարակական դժգոհություններով, չհանգեցրին լուրջ բախումների: Ընդդիմության առաջնորդը հաճախ իր ելույթներում քաղաքակիրթ, իրավական պայքարի և զսպվածության կոչեր էր անում՝ հանդարտեցնելով իր համակիրներին: Ի վերջո, երբ պարզ դարձավ, որ իշխանափոխություն չի լինելու, Ր. Հովհաննիսյանի օգտին քվեարկածների զգալի մասն այլևս նրան չէր աջակցում:[10]

---

[9] **Թորոսյան Տ.** Յո՞ երթաս, Հայաստան, http://168.am/2013/03/07/192008.html

[10] Քաղաքագետները վերջին իրադարձություններից հետո Ռաֆֆի Հովհաննիսյանի վարկանիշի անկում են նկատում /16 ապրիլի 2013/, http://armenpress.am/arm/news/715388/qaxaqagetnery-verjin-iradardzutyunneric-heto-raffi-hovhannisyani.html; Դեպի Ազատության հրապարակ. «Ռաֆֆի Հովհաննիսյանի վարկանիշը կտրուկ անկում է ապրել, և այդ տեղը փորձում են զբաղեցնել այլ քաղաքական ուժեր» /19.04.2013/ http://medialab.am/news/id/563;

Այդ ընտրություններն առանձնացան նաև արևմտյան ընտրական տեխնոլոգիաների լայն ներդրմամբ, որոնք հատկապես կիրառում էր ընդդիմության լիդերը: Սակայն միայն հետագա ընտրությունների արդյունքներն ու հետընտրական զարգացումները ցույց կտան, թե այդ դրսևորումները կմնան որպես 2013թ. ընտրության առանձնահատկությունը, թե կվերածվեն Հայաստանում ընտրական մշակույթի ավանդույթի: Քանի որ քաղաքական ավանդույթի ձևավորման գլխավոր դերակատարը քաղաքական ուժերն են, ապա այդ հարցադրման պատասխանը որոշ չափով կարող է տալ մինչ այժմ տեղի ունեցած 5 խորհրդարանական ընտրությունների վերլուծությունը:

## Խորհրդարանական ընտրությունների օրինաչափություններն ու առնձնահատկությունները

Հայաստանում տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ տվյալները բերված են Աղյուսակ 2–ում:

*Աղյուսակ 2.*

ՀՀ քաղաքական ուժերի մասնակցությունը ԱԺ ընտրություններին, ԱԺ մուտք գործած ուժերի քանակը, իշխանական և ընդդիմադիր ուժերի տոկոսային հարաբերակցությունը խորհրդարանում՝ ըստ ստացած ձայների:

| ԱԺ գումարում | Ընտրություններին մասնակցած քաղաքական ուժեր | Խորհրդարան մուտք գործած քաղաքական ուժեր | Իշխանական ուժերի թիվը | Ընդդիմադիր ուժերի թիվը | Իշխանական ուժեր | Ընդդիմադիր ուժեր | Իշխանական ուժերի տոկոսներ | Ընդդիմադիր ուժերի տոկոսներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Առաջին՝ 1995թ. | 13 | 5 | 2 | 3 | Հանրա-պետ. միավո-րում Շամի-րամ միավո-րում | ՀԿԿ ԱԺՄ ԱԻՄ | 59.54% | 25.18% |
| Երկրորդ՝ 1999թ. | 21 | 6 | 1 | 5 | Միաս-նություն դաշինք | ՀԿԿ, Իրավունք և միաբանություն, ՀՅԴ, ՕԵԿ, ԱԺՄ | 41,69% | 38.34% |
| Երրորդ՝ 2003թ. | 21 | 6 | 3 | 3 | ՀՀԿ ՕԵԿ ՀՅԴ | Արդարություն դաշինք, Ազգային միաբանություն, ՄԱԿ | 47.71% | 28.29% |
| Չորրսրդ՝ 2007թ. | 23 | 5 | 3 | 2 | ՀՀԿ ՕԵԿ ԲՀԿ ՀՅԴ | Ժառանություն /2009-ից՝ նաև ՀՅԴ/ | 56.09% | 19.16% |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հինգերորդ՝ 2012թ. | 9 | 6 | 2 | 3+*(1)* | ՀՀԿ ՕԵԿ | ՀԱԿ, ՀՅԴ, Ժառանգություն + *(ԲՀԿ)*, | 47.51% | 17.75% + *(28.9%)* |

Անմիջապես նկատելի է երկու օրինաչափություն. Խորհրդարան անցած քաղաքական ուժերի թիվն ունի մեծ կայունություն՝ 5-6, և առաջին չորս ընտրություններին մասնակցել է մոտ երկու տասնյակ կուսակցություն ու դաշինք: Սակայն բերված տվյալները վկայում են նաև, որ 2012թ. Ազգային ժողովի ընտրությանը մասնակցած քաղաքական ուժերի թիվն ավելի քան երկու անգամ նվազել է, իսկ 2007թ. ընտրությունից հետո խորհրդարան անցած 5 ուժերից 4-ը ձևավորել են կոալիցիոն կառավարություն և խորհրդարանական ընդդիմությունը ներկայացնում էր միայն փոքրաթիվ խմբակցություն ունեցող <<Ժառանգությունը>>: Ճիշտ է, երկու տարի անց խորհրդարանական մեծամասնության կազմից դուրս եկավ ՀՅԴ-ն, սակայն այդ խմբակցությունը ևս փոքրաթիվ էր և իրավիճակը չփոխվեց: Բերված տվյալները ցույց են տալիս ևս մեկ օրինաչափություն, որը խախտվել է 2007թ. ընտրությունների արդյունքում: 1999թ. սկսած խորհրդարանական յուրաքանչյուր ընտրության արդյունքում Ազգային ժողով է անցել մեկ նոր քաղաքական ուժ (համապատասխանաբար՝ ՕԵԿ, ՄԱԿ, <<Ժառանգություն>>, ՀԱԿ)՝ ստանալով գրեթե անցման շեմային ձայներ: Այդ օրինաչափությունը խախտվել է 2007-ին, երբ խորհրդարանում տեղեր ստացավ ևս մեկ նոր քաղաքական ուժ՝ ԲՀԿ-ն: Այդ կուսակցությունն առաջին իսկ փորձի արդյունքում, ինչպես նաև հաջորդ ընտրություններում ունեցավ 2-րդ ցուցանիշը: Այդ հաջողությունը, թերևս, պայմանավորված էր նյութական հզոր ներուժով և կուսակցության առաջնորդի անձնական հատկանիշներով: Սակայն պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ բազմաթիվ փորձագետների պնդումների համաձայն, ԲՀԿ-ի ստեղծման նախաձեռնողներից մեկը եղել է այն ժամանակ երկրի գործող նախագահը, ինչն ապահովել է լուրջ աջակցություն: 2012 թ. ընտրությունների արդյունքում ԲՀԿ-ն չմասնակցեց կոալիցիոն կառավարության ձևավորմանը, սակայն կուսակցությունը դժվար է միանշանակորեն դասել ընդդիմադիր խմբակցությունների շարքում, քանի որ այնուհանդերձ չի դրսևորում լիարժեք ընդդիմադիր քաղաքական կեցվածք: Անգամ խուսափում է <<ընդիմադիր>> կոչվելուց՝ իր կարգավիճակը բնորոշելով որպես <<այլընտրանք>>: Կուսակցությունը հիմնականում մասնակցում է ընդդիմության նախաձեռնած նիջոցառումներին, սակայնսահմանափակ նպատակադրումները՝ երկու գումարումների ընթացքում իր թվաքանակով երկրորդ խմբակցությունն ունենալով, մեծապես նվազեցնում է ԲՀԿ ազդեցությունը քաղաքական գործընթացների վրա: Այդ հանգամանքը լրջորեն ազդում է ոչ միայն կուսակցության գործունեության արդյունավետության վրա, այլև էական խոչընդոտ է բազմակուսակցական համակարգի կայացման համար: Պատահական չէ, որ պետական և տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմիններում բացարձակ մեծամասնություն ունի ՀՀԿ-ն: Պետական ներկայացուցչական մարմիններում իրական քաղաքական մրցակցության խիստ ցածր մակարդակը ոչ միայն լրջորեն խաթարում է իշխանության ճյուղերի միջև հակակշիռների ու զսպումների սահմանադրական համակարգի լիարժեք գործունեությունն, այլև խոչընդոտում է բազմակուսակցական համակարգի կայացմանն ու արդիական սկզբունքների հիման վրա գործող ընդդիմադիր և կառավարող կուսակցությունների ձևավորմանը: Իրավիճակը բնորոշ է ոչ միայն Հայաստանին, այլև հետխորհրդային մյուս երկրներին,

որտեղ առկա է ոչ թե բազմակուսակցական համակարգ, այլ կուսակցությունների համախումբ, ինչը սկզբունքորեն տարբերվում է առաջինից: Չլինելով համակարգի մաս, կուսակցությունները պատասխանատվություն չեն կրում ոչ միայն այդ համակարգի մյուս տարրերի, այլև ընդհանրապես հասարակության առաջ՝ տուրք տալով անպատասխանատու հռետորությանը և ամբոխավարությանը[11]:

Հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրներում ազմակուսակցական համակարգի չկայացման մեկ այլ պատճառ է հայեցակարգային գաղափարական բազմակարծության գրեթե իսպառ բացակայությունը: Քաղաքական դաշտում ակտիվություն ցուցաբերող ուժերի ծրագրերը հիմնականում չեն տարբերվում միմյանցից:[12] Արդյունքում՝ քաղաքական ուժերը հենվում են ոչ թե հասարակական տարբեր խմբերի վրա՝ բացահայտելով նրանց հուզող խնդիրներն ու առաջարկելով լուծումներ, այլ իրենց առաջնորդի անձնական որակների և հեղինակության վրա: Այդ իսկ պատճառով քաղաքական ուժերի ներկայությունը և ներգրավվածությունը քաղաքական գործընթացներում մեծապես պայմանավորված է քաղաքական առաջնորդով: Այդ կերպ ղեկավարվող կուսակցություններում լիդերային դետերմինիզմի բացասական և վտանգավոր կողմն այն է, որ առաջնորդի անձնական վարքագծով է պայմանավորվում նաև ամբողջ քաղաքական ուժի վարքագիծը և հասարակության մոտ վերջինիս նկատմամբ վերաբերմունքը:[13]

Ակնհայտ է, որ հետխորհրդային երկրներում ընտրական ինստիտուտների գործունեության վերլուծությունն անհնարին է առանց մի շարք խորքային խնդիրների, մասնավորապես, բազմակուսակցական համակարգի կայացածությանն անդրադարձի: Ահա թե ինչու թեև ընտրական ինստիտուտների գործունեության գնահատման տեսակետից օգտակար են ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող միջազգային կառույցների, մասնավորապես, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ զեկույցները, սակայն դրանք, ըստ առաքելության նպատակների, առաջին հերթին ձևավորում են ընտրությունների որակի ընդհանուր գնահատականները[14]: Այդուհանդերձ, այդ զեկույցները պարունակում են ընտրությունների մասին մի շարք տվյալներ, որոնց հիման վրա որոշ հետազոտողներ փորձում են գնահատել իրավիճակը հետխորհրդային երկրներում: Մասնավորապես, Մաքս Բադերը, հիմք ընդունելով ԵԱՀԿ դիտորդական եզրակացությունները , նշում է, որ հետխորհրդային տարածքո առանձնանում է իր թերի ընտրական գործընթացներով: Համեմատելով 1998-2008թթ. Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում, Մոլդովայում, Ուկրաինայում, Ռուսաստանում, Ղազախստանում, Բելառուսում, Ղրղզստանում տեղի ունեցած նախագահական և խորհրդարանական ընտրությունները՝ նա նշում է առանձին երկրներում նկատվող դանդաղ դրական տեղաշարժերի մասին՝ դրա պատճառը համարելով հատկապես այդ երկրներում

---

[11] **Թորոսյան Տ.,** Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա, Երևան, 2006, էջ 144:

[12]**Օրդուխանյան Է.,** Իշխանություն և ընդդիմություն. քաղաքական խոսույթի վերլուծություն, «Լիմուշ» հրատ., Երևան, 2010, էջ 158:

[13]**Օրդուխանյան Է., Սուքիասյան Հ.,** Քաղաքական մշակույթի առանձնահատկությունները Հայաստանում, «Լուսաբաց» հրատ., Երևան, 2012, էջ 42:

[14] OSCE, *Armenian Presidential Elections*, September 24, 1996, Final Report, 14p., OSCE, *Republic of Armenia, Presidential Elections*, March 16 and 30, 1998, Final Report, 21p.,OSCE, *Republic of Armenia, Presidential Elections*, 19 February and 5 March, 2003, Final Report, 31 p., OSCE, *Republic of Armenia, Presidential Elections*, 19 February, 2008, Final Report, 36 p., OSCE, *Republic of Armenia, Presidential Elections*, 18 February, 2013, Final Report, 33 p.

ձևավորված ավտորիտար վարչակարգերը:[15] Հետաքրքիր է, որ Բադերի ուսումնասիրությունը հաստատում է վերը բերված վերլուծության արդյունքում Հայաստանի համար բացահայտված հետևությունը, որ խորհրդարանական և նախագահական ընտրություններն ունեն մի շարք էական տարբերություններ: Մասնավորապես, ըստ Բադերի մոտեցման, Վրաստանում, Ռուսաստանում և Ղրղզստանում դիտարկվող ժամանակահատվածում տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունները համարվել են մրցակցային, իսկ նախագահական ընտրությունները՝ հեգեմոնիկ:
Անդրադառնալով հարավ-կովկասյան տարածաշրջանի երեք հանրապետություններում նախագահական և խորհրդարանական ընտրություններին՝ հեղինակը նշում է, որ Հայաստանում 1998 թ. նախագահական, 1999 թ. խորհրդարանական, 2003 թ. նախագահական և խորհրդարանական, 2007 թ. խորհրդարանական և 2008 թ. նախագահական ընտրությունները եղել են մրցակցային, ի տարբերություն Ադրբեջանի, որտեղ բոլոր նախագահական և խորհրդարանական ընտրությունները 2000-2010 թթ. կրել են հեգեմոնիկ բնույթ: Իսկ Վրաստանի դեպքում 1999-2010 թթ. կայացած ընտրությունների մի մասը՝ 1999 թ. խորհրդարանական, 2000 թ. նախագահական, 2004 թ. նախագահական և խորհրդարանական եղել են հեգեմոնիկ, իսկ 2003թ. խորհրդարանական, 2008 թ. նախագահական և խորհրդարանական ընտրությունները՝ մրցակցային:[16] Սակայն դժվար չէ նկատել, որ Բադերի առաջարկած մոտեցման դեպքում տվյալները բավարար չեն բացահայտելու համար Հայաստանի պարագայում նախագահական և խորհրդարանական ընտրությունների առանձնահատկությունները, որոնք ի հայտ եկան վեր բերված վերլուծության արդյունքում, երբ, ի տարբերություն Բադերի, օգտագործվում են ոչ միայն ընտրությունների վերաբերյալ վիճակագրական ցուցանիշներ, այլև կուսակցությունների վարքային դրսևորումները և բազմակուսակցական համակարգի գործունեությունը բնութագրող տվյալներ:

## Եզրակացություն

Հայաստանի ընտրական ինստիտուտի արդյունավետության խնդիրների վերլուծության արդյունքների համեմատությունը հետխորհրդային երկրների ընտրությունների վիճակագրական ցուցանիշների վերլուծության ժամանակ բացահայտված օրինաչափությունների հետ վկայում է, որ

1. հետխորհրդային երկրներում անցկացվող նախագահական և խորհրդարանական ընտրությունները միմյանցից տարբերվում են թե՛ մրցակցայնությամբ, թե՛ նախընտրական և հետընտրական զարգացումների ժամանակ դրսևորված քաղաքական խոսույթով, թե՛ այդ զարգացումների լարվածությամբ,
2. հետխորհրդային տարածքում հասարակական ընկալման մեջ նախագահական ընտրությունների ժամանակ նկատվում է ավելի բարձր ակտիվություն, հետևաբար և ավելի է կարևորվում այդ ընտրությունների արդյունքը

[15] **Bader M.,** Trends and Patterns in Electoral Malpractice in Post Soviet Eurasia. *Journal of Eurasian Studies* 3, 2012, pp. 49-57.
[16] **Bader M.,** Trends and Patterns in Electoral Malpractice in Post Soviet Eurasia. *Journal of Eurasian Studies* 3, 2012, pp. 49-57.

հասարակական զարգացումների տեսակետից: Ընդ որում, այդ օրինաչափությունը նկատվում է ոչ միայն նախագահական ինստիտուտի զգալիորեն գերակշռող լիազորությունների, այլև խորհրդարանի ու նախագահի լիազորությունների սահմանադրական լիարժեք հավասարակշռվածության դեպքում,

3. Թեև ընտրական գործընթացները կարևոր նշանակություն ունեն հետխորհրդային երկրներում ժողովրդավարացման վիճակի գնահատման տեսակետից, այդուհանդերձ պետականության կայացման համար առանցքային է բազմակուսակցական համակարգի կայացվածությունը,
4. հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրներում ընտրական ինստիտուտի գործունեության արդյունավետության ուսումնասիրությունը թերի է միայն ընտրական գործընթացների վիճակագրական տվյալների օգտագործման ժամանակ: Այն կարող է բացահայտել իրական հիմնախնդիրները, երբ վերլուծության ժամանակ հաշվի են առնվում նաև կուսակցությունների վարքային դրսևորումները և բազմակուսակցական համակարգի գործունեությունը բնութագրող տվյալներ:

## The Problems of Electoral Institute Effectiveness in Armenia

**EMIL ORDUKHANYAN**
**UNESCO Chair on Human Rights, Democracy and European Studies, YSLU**

In the Post-Soviet countries, the process of democratization does not happen smoothly, and it gives rise to various conflicts, rarely engaging consensual political processes. The electoral institute as one of necessary elements of the electoral political culture, plays a very important role in the formation of political process. Nowadays, the study of the democratization process, excluding electoral institute is impossible, because this institution is one of the main catalysts of democratization. From this perspective, in the context of political participation and political discourse, we examines the electoral processes in Armenia from 1991 to 2013, identifying the problems, the dynamics and the characteristics of the electoral institute in Armenia. The electoral institute in Armenia is not stable and has a conflict nature, mainly the political forces are personalized and have no ideological differences. All these processes have a negative impact on the functioning of the electoral institute, which is essential for the democratization and development of civil society. To improve the functioning of the electoral institute and to restore public confidence in it, except for legislative reforms that make power, we must also raise the level of political consciousness of the political forces and society.